# ՍԵՐԸ ՉԻ ՆԱԽԱՆՁՈՒՄ

Ի՞նչ է Սերը
Մաս 3

*«Սերը չի նախանձում.» Ա Կորնթացիս 13:4*

**Նախանձը ուրիշների նկատմամբ Աստծու բարությունից վրդովվելն ու քո նկատմամբ Աստծո բարությունը անտեսելն է**

*«Ուր որ նախանձ կա...այնտեղ ամեն չար բաներ կա:»*
Հակոբոս 3:16

## Հակաթույն նախանձի դիմաց

Հիսուսի առակը այգու բանվորների մասին (Մատթեոս 20)

### 1. Դադարիր համեմատել քեզ ուրիշների հետ

*«Եվ ժամը տասնմեկիններըը գալով, մի մի դահեկան առան: «Առաջիններն էլ եկան՝ և <u>կարծեցին, թե ավելի կ'առնեն</u>:»* Մատթեոս 20:9-10

### 2. Ուրախացիր տեսնելով Աստծո շնորհքը ուրիշների կյանքում

*«Առաջիններն էլ եկան և կարծեցին, թե ավելի կ'առնեն. և նրանք էլ մի մի դահեկան առան: <u>Բայց երբոր առան,</u> տանտիրոջիցը տրտնջում էին... նա էլ պատասխանեց... ''քո աչքը չ՞ար է որ ես բարերար եմ.''»* Մատ. 20:10-11,15

*«Ուրախացողների հետ ուրախացեք.»* Հռով. 12:15

### 3. Շնորհակալ եղիր այն ամենի համար, որ ունես

*«Ի՞նչ ունիս դու՝ որ չես առել. և եթե առել ես, ի՞նչու ես պարծենում չ'առածի պես: Արդեն կշտացած եք.»*
Ա Կորնթացիս 4:7-8

### 4. Վստահիր Աստծուն, երբ կյանքը թվում է անարդար

*«Թե այդ հետինները մեկ ժամ գործեցին, և դրանց մեզ հետ հավասար արիր, որ օրի ծանրությունը և տաքությունը քաշեցինք:»* Մատթեոս 20:12

*Տանտեր: «Ընկեր, ես չեմ զրկում քեզ. Չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանի համաձայնեցիր... բայց ես ուզում եմ, որ այս հետինին տամ ինչպես քեզ: Մի՞թե ես իշխանություն չ'ունեմ՝ անելու ինչ որ ուզեմ իմ ստացվածքին.»*
Մատթեոս 20:13-15

### 5. Մտքերդ կենտրոնացրու Աստծո՝ քո համար ունեցած ծրագրի վրա

*«Տանտեր: Քոնը առ և գնա.»* Մատթեոս 20:14

*«Եվ համբերությամբ վազենք մեր առաջին դրած ասպարեզի ընթացքը.»* Եբրայեցիս 12:1

*«Իմ ոսկորները չ'ծածկվեցան քեզանից, երբոր ես ստեղծվեցա ծածուկ տեղը. և երկրի խորություններումը ճարտարությունով կազմվեցա:»* Սաղմոս 139:15

*Հիսուսը վերջացրեց:*
*«Այսպես հետիններն առաջին կ'լինեն, և առաջիններն հետին...եթե ձեզանից ով որ կամենա մեծ լինել, թող ձեզ ծառա լինի:»* Մատթեոս 20:16, 26


Հաջորդ Քարոզի Պատգամավոր

**ՍԵՐԸ ԽՈՆԱՐՀ Է**

**Հովիվ Սարո Խաչիկեան**